Նման պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով ներկայացված հայցը մերժվում է, Դատարանը գտնում է, որ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանվի մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

<<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի միջև 04.05.2023թ. կնքված «ՓՊՄԱՊՁԲ-23-7/42-2» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 04.08.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը, համարել լուծված:

Դատարանի՝ 31.08.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**